



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



14 JUL 2009  
23 JUN 2009

№ 3

ՄԸԲՄԻՄ ԳՕՐԿԻԻ

1903. № 1201.

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
АКАДЕМИИ НАУК  
СССР



Թարգմանեց

ՅՈՎ. ՍՏԵՓԸՆԵԱՆ.

ԳՐԱՆ Ի 5 ԱՊ.

Մ  
Ս  
Տ  
Բ  
Ը

1(088)  
Գ-83

Շ Ո Ւ Շ Ի

Յարան Բ. Տէր-Սահակեանի

1903.

60986-67

1 Գրքի վերջին  
4-83 վերջին

ԴՄ-5999 21/մ-28

ՄԸ-16868 8/մ-81  
ՄԻԽ-4706 13/մ-81

ПК з. 392. т. 3.000 500

ETOS YAM S

1(088)  
9-83

32

ՄԱԳՍԻՍ ԳՕՐԿԻ ИНОТЕНА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

# Մ Տ Ք Ե Ր

— ЕДРО —

Թարգմանից

**ՅՈՎ. ԱՏԵՓԱՆԵԱՆ.**



Շ Ո Ւ Շ Ի

Տպարան Բ. ՏԼՂ-Սահակեանի  
1903.

2 MAY 2013

3299

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐԱԿԱԼ ՄԱՐԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԿԱԼ ԿՈՄԻՏԵ  
1922

Дозволено Цензурою, Тифлисъ, 19-го Апрелья 1903 г.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐԱԿԱԼ ՄԱՐԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԿԱԼ ԿՈՄԻՏԵ  
1922

60986-67

### ՄՏՔԵՐ ԿԵՆՆՔԻ ԵՒ ՄԱՐԿԱԿԱՆՑ ՄԱՍԻՆ.

Գիրք — այդ մեռած մարմին է, նրան ինչպէս կուզես վերցրո՛ւ, պատուիր, կարիր, նա ձայն չի հանիլ: Բայց կեանք — չէնց որ մի սխալ քայլ արիր նրա վրայ, անկանոն կերպով տեղ բռնեցիր նրա մէջ քեզ համար թէ չէ, մէկ էլ տեսար հազարաւոր ձայներ պոռում են քեզ վրայ, այլ և զարկում, գլխիդ բռնվում:

Կեանքը խառնում է մեզ, որպէս խաղաթղթեր և միայն պատահաբար, և այն էլ ոչ երկար ժամանակով, մենք ընկնում ենք մեր տեղը:

Կեանքի իմաստը գեղեցկութեան և նպատակներին ձգտելու ուժի մէջ է, և պէտք է որ կեանքի իւրաքանչիւր մի վայրկեանն ունենայ իւր վսեմ դիտաւորութիւնը:

Եթէ որ կեանքն՝ իւր բոլոր միաւորութիւններով գառնար ամբողջապէս մի կրիտիկական վայրկեան, եթէ որ ամեն մի ակնթարթ մարդս հարկադրուած լինէր զողալու իր գոյրայի ամբողջու-

Թեան պահպանման համար. . . Աստուած վկայ՝  
կեանքն աւելի կենդանի, իսկ մարդիկ առաւել  
հետաքրքիր կը լինէին:

Իւրաքանչիւր մարդ է յիմար և խարդախ — յի-  
մարը նրա զգացմունքն է, իսկ խարդախը — միտքը:

Մի հաւատար մարդուն: Որովհետեւ միշտ, երբ  
նա ինքն է պատմում իրեն մասին՝ ստումէ. եթէ  
զժբախտ է, որպէսզի դէպ ինքն աւելի կարեկցու-  
թիւն յարուցանէ, եթէ բախտաւոր — որպէսզի ի-  
րան աւելի նախանձեն, յամենայն դէպս — որպէս-  
զի աւելի ուշադրութիւն գրաւէ:

Մարդկանց մեծամասնութեան զժբախտու-  
թիւնը նրանումն է, որ նրանք իրանց աւելի ըն-  
դունակ են համարում, քան կարող են:

Մարդիկ կան, որոնք ամբողջ կեանքում  
գտնուում են պաշարման դրութեան մէջ:

Ինքնագոհ մարդ — այդ հասարակութեան  
կրծքի վրայ քարացած ուռուցք է:

Մեզանից ամեն մէկի ստոյգ կոչումն է —  
կարգաւորել վարք ու բարքի կանոնները մեր մեր-  
ձաւորների համար, և անխրաւացի են այն քա-

րողիչները, որոնք մեզ նախատում են եսականու-  
թեան մէջ, որովհետեւ կրբ մենք առանց շահա-  
լնդրութեան ենք ձգտում մարդկանց բարւոյ  
տեսնելու, միշտ մոռանում ենք մեր մասին և,  
շատ կարելի է որ, հէնց դրանից ենք մենք ա-  
մենքս այսպէս վատ:

Մարդ — կեանք է, և բացի մարդուց չը կայ  
այլ կեանք:

Որքան մարդ աւելի լաւ է, որքան աւելի մա-  
քուր և աւելի ազնիւ է նրա հոգին, այնքան էլ  
առաւել քիչ է նրա մէջ հռանդր, այնքան էլ առա-  
ւել ցաւազար է նա, և ծանր է նրա համար  
ապրելը:

Մարդը մարդուն պարտաւոր է ուշադրու-  
թիւն ցոյց տայ ոչ թէ հայեցակէտից, այլ սրտի  
թելադրութիւնից:

Մարդ իսկապէս երբէք չը գիտէ թէ ինքն  
ո՞վ է. . . Պէտք է հարցնել նրանից, թէ ինքն ո՞ւմ  
տեղ է իրեն ընդունում:

Երբեմն մարդու կեանքն այնքան ոգորմելի  
է լինում, որ նա ակամայից հարկադրուում է գնա-  
հատել իւր արատն և նրանով ապրել, ուղղակի

կարելի է ասել, որ մարդիկ յաճախ արատաւոր են դառնում ձանձրոյթից:

Ամեն ինչ իր վերջն ունի—այս կեանքի ամենամեծ արժանիքն է:

Կեանքի իմաստը բախտաւորութեան մէջ չէ. և բաւականութեամբ մարդս իրեն յագուրդ տուած չի կարող լինել, նա յամենայն դէպս բարձր է գրանից:

Կեանքը շատ պարզ է գրուած.—կամ ամենքին կոծիք, կամ տղմի մէջ ընկիր:

Ապագան պատկանում է ազնիւ աշխատանքի մարդկանց:

Մարդ, ո՞վ էլ կուզէ նա լինի, միշտ մի քիչ ծաղկեցնում է իրան:

Մենք ամենքս գանգատուում ենք մարդկանցից, իսկ ինքներս էլ մարդիկ ենք, և, կը նշանակէ, մեզնից էլ կարելի է գանգատուել: Մեզ խանգարում են ապրել.—կը նշանակէ՝ մենք էլ ենք ո՞ր և է մէկին խանգարել:

Բայց և այնպէս մարդս անպաշտպան ապ-

րում է և ոչ մի հսկողութիւն չը կայ նրա վրայ: Նրան արգելուած է մեղք գործել, բայց մեղք չը գործել անկարելի է. . . Ուստի և փողոցներում կարգաւորութիւն է տիրում, իսկ հողու մէջ խառնակութիւն:

Մարդիկ մինչ՝ այն ժամանակ են գրաւիչ, քանի դեռ նրանք ուժգին կերպով ձգտում են մի բանի, գնում ո՞ր և է տեղ, մի ինչ—որ բան որոնում, տանջւում. . . Բայց եթէ նրանք իրենց նպատակին հասել և կանգ են առել, այդ տեղ արդէն նրանք դառնում են անհետաքրքիր և մինչև անգամ անարգ:

Ես չը գիտեմ գրքի ո՞չ մի ճշմարտութիւն, որ ինձ համար աւելի թանգ արժենայ մարդուց: Մարդս տիեզերքն է, և յիրաւի դարերից ՚ի վեր ապրում է նա՝ կրելով իր մէջ տրար աշխարհ:

Մի մարդ կարող է ունենալ կեղտոտ քիթ, բայց լաւ հոգի, մօլօքուրտ երես, բայց պայծառ միտք:

Պէտք է գիտենալ, թէ ինչպէս վատ են ապրում մարդիկ և ինչպէս լաւ կարող էին ապրել նրանք, եթէ որ աւելի խելօք լինէին և աւելի յարգէին մէկ մէկու իրաւունքները:

Աշխարհս միշտ լաւերի համար աւելի վատ է,  
քան վատերի համար:

Մարդը գնահատուած է կեանքի ուժին ցոյց  
տուած իր ընդդիմադրութիւնով:

Աշխարհումս հետաքրքիր մարդիկ սարսափե-  
լի քիչ են:

Կեանքի դէմ կռիւ մղող, նրանից յաղթա-  
հարուող և նրա տղմի անողոր Գերութեան մէջ  
տառապող ամեն մի ոք առաւել փիլիսոփայ է,  
քան նոյն ինքն Զօպէնհաուէրը:

Մարդիկ չեն ապրում, այլ ամեն ինչ շափում  
— կշռում են և դրա վրայ հիմնում իրենց ամբողջ  
կեանքը:

Կեանքն ունի իւր իմաստութիւնը, նրա ա-  
նունը պատահումներ է. երբեմն նա մեզ պարզեցողը  
բուժում է, բայց յաճախ էլ վրէժխնդիր է լինում  
և, ինչպէս արևն իւրաքանչիւր առարկայի վրայ  
ստուեր է ձգում, այդպէս էլ կեանքի իմաստու-  
թիւնը տալիս է մարդկանց արարքին հատու-  
ցումն: Այդ ուղիղ է, անխուսափելի և մենք ա-  
մենքս պէտքէ գիտենանք այդ և չը մոռանանք:

Մարդ գոյութեան կուում յաղթող հանդի-  
սանալու համար կամ պէտք է ունենայ շատ խելք  
կամ դազանային սիրտ:

Միայն վէպերումն է անցքերի կծիկը կա-  
նոնաւոր կերպով բացուում, մեր կեանքն անկա-  
նոն, մճճուած կոճ է:

Ըստ ներկայ ժամանակների լաւ մարդկանց  
անուանում են և խելօք զարշիլիներ:

Երբէք մարդ ամբողջապէս չէ լաւ կամ վատ:

Ինչո՞ւ են տահասարակ բոլոր մարդիկ միշտ  
վիճում և ցանկանում, որ նրանց հետ համաձայ-  
նուեն: Չէ որ այն ժամանակ որ—և է բանի մա-  
սին խօսելն անկարելի կը լինի:

Երջանիկը — բոլոր մարդկանց թշնամին է:

Միմիայն այն մարդիկ, որոնց հոգու մէջ  
բուն է դրել ստրկի վախկոտութիւն կեանքի առ-  
ջև, որոնց կրծքերի մեռած սրտերի տեղ զար-  
շելի ինքնապաշտութեան վիթխարի պալարն է  
բուսել — միմիայն նրանք են աւելորդ. . .

Մարդուց թանկագին բան չը կայ, այդպէս  
և զիտցիր:



Մարդկանց մեծամասնութիւնը— մի շահանոց ընթացիկ զբամ է. . . Եւ նրանց մէջ եղած բոլոր տարբերութիւնը զբամահատութեան թուականները մէջ է: Այս մէկը ջնջուած է, միւսը նորագոյն, բայց զբանց արժէքը մէկ է, միատեսակ նիւթից են և ամենայն ինչով նրանք սերտ նման են միմեանց:

Կեանքը լաւ մարդիկ շատ ունի, նրան հարկաւոր են կատարեալ մարդիկ:

Մարդկանց յարաբերութիւնը դէպի իրար պէտք է ազատ լինի նրանց, ամենրի կողմից օրէնք ընդունուած՝ պաշտօնական խաբերայութիւնից:

Այժմ մարդն աշխարհի թագաւորը չէ, այլ կեանքի ստրուկը, կորցրել է նա հպարտութիւնը իւր անդրանկութեամբ՝ փաստերի առաջ խոնարհուելով:

Մարդու մասին ուղիղ ոչինչ չի կարելի ասել. . . ո՞վ կարող է նրան ճանաչել: Նա ինքն իրան չէ ճանաչում:

Կեանքը լուրջ խաղ է:

Կեանքի իմաստութիւնը միշտ աւելի խորունկ

և աւելի լայնածաւալ է մարդկային իմաստութիւնից:

Ապրում եմ— կը նշանակէ պարտաւոր եմ դժգոհելու՝ տեսնելով այն, թէ ինչպէս են անկիրթ մարդիկ ապականում կեանքը՝ նրան գերի դառնալով:

Ծանրաբեռնել ենք աւօրեայ հոգսերի ցնցոտիներով մեր հոգին և ընտելացել ենք առանց հոգի ապրելու, մինչ՝ այն աստիճան ենք ընտելացել, որ և չենք նկատում, թէ ինչպէս ենք մենք ամենքս փայտացել, սնդոգայ, անկենդան դարձել:

Ի՞նչպէս կարելի է չը հաւատալ մարդուն: Մինչև անգամ եթէ տեսնում ես— ստում է նա, հաւատան նրան՝ այսինքն լսիր և աշխատիր հասկանալ, թէ ինչո՞ւ է նա ստում: Միւս անգամին սուտն ճշմարտութիւնից աւելի լաւ է պարզաբանում մարդուն. . .

Որքան էլ ստոր աստիճանի վրայ լինի կանգնած մարդ, — երբէք չի հրաժարուիլ իրեն աւելի ուժեղ, աւելի խելօք, թէպէտ և մինչև անգամ իւր մերձաւորներից աւելի կուշտ զգալու վայելչական զգացողութիւնից:

Ամեն մարդ կուզէ գրօշով շահանոցներ գնել:

Թշնամիները—կուշտ թէ քաղցած, դարեր յաւիտեան միմիանց աչքի ծեղ կը լինեն:

Կեանքն իշխան չէ՝ իր արժէքն իմացող մարդու վրայ:

Կեանքում աւելի կարեօր և աւելի հետաքրքիր բան չը կայ, քան մարդկային գործողութիւնների խաղերը:

Լաւ մարդու մօտ կը նսեմանաս. . . ինչպէս պղնձէ կոպէկն արծաթի մօտ, և ինքդ էլ յետոյ քսանկոպէկանոցի տեղ կանցնես. . .

Ասում են, թէ բոլոր մարդիկ եղբայր են, սակայն ոչ ոք չի փորձել ապացուցանելու այդ չափաբերական մատեանների ստուգութիւններով:

Չարիք գործելու անիմացութեան գիտակցութիւնը մարդու համար աւելի վիրաւորական է, քան բարիք գործելու անկարելիութեան գիտակցութիւնը, որովհետև շարութիւն անելն այնպէս հեշտ և հասարակ բան է:

Մարդու սրտում հաւատի համար տեղ չառ կայ, բայց նրա մէջ համոզմունքը ճնշուած է:

Ինքնագնահատութեան բացակայութիւնից աւելի շատ մարդիկ են կործանուում, քան թէ թութախտից, և ահա թէ ինչո՞ւ մասսաների առաջնորդները, պատահում է որ, ծառայում են որպէս ոստիկանական վերակացուներ:

Իմանալ աւելի շատ, քան պէտք է, այդ նոյնպէս վնասակար է մարդուն, ինչպէս և այն չը գիտենալն, որ անհրաժեշտ է գիտենալ:

Մարդկանց մէջ յաճախ պատահում են այնպիսի բարդ էութիւններ, որոնց ինչ որ էլ կուզես անուանիր, բոլորը տեղին կը լինի, միայն մարդու անունն չէ նրանց սազ գալիս:

Մարդ ազահ է, որովհետև վիճակը նրան չափազանց սակաւ է քաղցր ժպտում:

Այն մարդիկ, որոնք իրենց ձեռքի աշխատանքով են ապրում, պէտք է առողջակազմ ծնունեն և քաջաւողջ գաւակներ արտադրեն. . .

Ռուսաստանը կարիք ունի խելօք և ազնիւ մարդկանց, աշխատիլը այդպէս լինել և դու էլ կը լինիս քո վիճակի տէրն և հասարակութեան օգտակար անդամը:

«Մտածող» մարդիկ շատ կան ուսական կեանքում, և նրանք ամենքն էլ աւելի դժբախտ են, քան մի այլ—որ, որովհետև նրանց մտածմունքները ծանրութիւնն աւելացել է նրանց մտքի բոռութիւնից:

Ազատամիտ վաճառական—այդ դայլի և խոզի խառնուրդ է զօգօշի և օձի հետ:

Լաւը նոյնպէս քիչ է, ինչպէս գեղեցիկը սակաւ է:

Լաւ պոռուղը շուտ չի հասնիլ:

Որ աշխարհումս լաւ բանը շատ լինէր, այն ժամանակ էլ գրան լաւի տեղ չէին դնիլ:

Նորածինը սողալ—թուշել չի կարող. . .

Կենդանի մարդը պէտք չէ ամենեին և յիշէ այն մասին, թէ կայ մահ, որ սպասում է նրան:

Կեանքն այնպէս է զրուած, որ մէկի մահն իրեն մարդու համար—տօնախմբութիւն է, իսկ մի ուրիշի մահն ամենքի համար բարեգոծութիւն:

Փուշ մարդիկ սովորաբար երկար են ապրում:

Աշխարհումս ոչինչ չի կատարում առանց բաւականաչափ հիմք ունենալու:

Ճշմարտութիւն կայ, որ պէտք է մարդուն, նա այրում—խորվում է նրա սրտի կեղտն ու անպիտանութիւնն—ամօթի բոցով,—այլ և կեցցիք: Ճշմարտութիւն էլ կայ, որը՝ մարդու գլխի վրայ ծանրանալով՝ ինչպէս քար, սպանում է նրա մէջ ապրելու ցանկութիւնը, - և մեռցնում. . .

Իւրաքանչիւր մարդկային գործ երկու կողմ ունի: Մէկն ամենքիս համար տեսանելի—այդ կեղծն է, միւսը թագնուած—այն էլ հէնց իսկականն է:

Հետաքրքիր է, թէ ինչո՞ւ մարդ պէպ՛ ինքն առաւել ուշադրութիւն է դարձնում, երբ դէպի կորուստ է դիմում, այլ ո՞չ այն ժամանակ, երբ նա առողջ է և ապահովուած: Երբեմն մենք բոլորովին ուշադրութիւն չենք դարձնում մի ապրող մարդու վրայ, նոյն իսկ մի քիչ էլ չենք հետաքրքրւում նրանով, և յանկարծ, լսելով որ նա մերձիմահ է կամ արդէն մեռաւ, ափսոսում ենք, նրա մասին խօսում:

Ես գիտեմ, որ մարդիկ հոգով աւելի նրբագրաց են դառնում մեր բարձր—կուլտուրական

օրերում և անգամ, երբ նրանք իրենց մերձաւորին աւնում են իւրեանց կոկորդը յայտնապէս նրան խեղդելու նպատակով—աշխատում են այդ այնպէս քնքշաբար անել, որ որքան կարելի է քաղաքավարութեան, ըստ տեղի պատշաճի, բոլոր վայելուչ կանգերն անթերի կատարուեն:

Պէտք է մարդ ծնուի կուլտուրական հասարակութեան մէջ, որպէսզի համբերութիւն ունենայ ամբողջ կեանքում նրա մէջ ապրելու և ոչ մի անգամ չը ցանկանայ հեռանալ մի ո՞ր և է տեղ՝ այդ բոլոր ճնշող պայմանների, սովորութիւնով օրէնքի կարգն անցած փոքրօզի, թունալից խարդախանքների, հիւանդոտ ինքնասիրութեանց միջնորդից, իղէական աղանդաւորութեան, ամեն տեսակ պղծութիւնների;— մի խօսքով՝ այդ բոլոր զգացմունքը բխացնող և միտքը մոլորեցնող իրարանցումների ժխուրից:

Կուլտուրական դասակարգի լաւ մարդը գուցէ և բարձր է նմանապիսի գիւղական մարդուց, բայց միշտ փշացած քաղաքացին անհամեմատ աւելի գարշելի և աւելի կեղտոտ է, քան փշացած գիւղացին:

Եւ ինչո՞ւ մարդ ամբողջ կեանքում միայն մանուկ չէ մնում:

Պատահում է որ և կեղտի մէջ մարդ ապրում է, և այն էլ աւելի մաքուր, քան նա, որ զբօսնում է ապրելչումի մէջ պճնուած:

Կեանքը խելքի շտեմարան է:

Երբ մարդ սիրահար է առաջխաղացութիւնների, նա միշտ կարող է նրանց 'ի կատարածել և կը գտնէ՝ թէ որտեղ կարելի է այդ: Կեանքում առաջխաղացութիւնների համար միշտ տեղ կայ:

Անցեալի մէջ մարդ հակամիտ է ամենաչնչին լաւն անգամ նկատելու, որ առաջ աննշմարելի էր նրա համար. . .

Եթէ մէկն սկսեց իրեն դէմ հակաճառել, գրիւր թէ՛ կորաւ այդ մարդը:

Ամեն ինչը համեմատաբար է այս աշխարհում, և նրա մէջ չը կայ մարդու համար այն զբոսութիւնը, որից աւելի վատթարն էլ անկարելի լինի գտնել:

Կեանքում երկոյթներ կան, որոնց և նոյն ինքն սատանան անտօր է ծաղրելու, օրինակ նա-

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ДОСТОЯНИЙ  
С.С.С.Р.

СС. Библиотека  
ЗУУР-АИМ. ССР


երբէք իր հեղուծեան սուր դանակով չէ շօշա-  
փել իւր գոյուծեան ամենամեծ փաստը:

Մենք մեր կեանքը մեր կաղապարի վրայ  
պիտի ձևենք:

Եյն մարդն, որ չը գիտէ թէ ինչ պիտի ա-  
նէ վաղը — դժբախտ է:

Մենք ինչ մեղաւոր ենք, երբ կեանքում ա-  
մեն բան այնպէս անյարմար է կարգաւորուած,  
որ համարեա թէ միշտ վարմունքի լաւութիւնն  
կանգնած է լինում նրա շահաւէտութեան դիմաց:

Մարդուս ներքին աշխարհը չափազանց բարդ  
է և զանազանակերպ նրա համար, որպէսզի մի-  
ակ մի բան միշտ հաստատուն հաւասարակշու-  
թեան մէջ պահպանէ նրա բոյոր ձգտումները,  
և դրա համար իւրաքանչիւրի կեանքում կայ  
մի խորխորատ, որի մէջ նա անդառնալի կեր-  
պով խորասուզուած է, երբ նրա համար լրանում  
է ժամանակը: Եւ դառն հեղուծեան ոյժերով  
զգաստներն, որոնցով ղեկավարում էին կեան-  
քում, աւելի խոր են սուզում և աւելի ցաւալի  
կերպով ջարդ ու փշուր դառնում:



1174 5

1080 1/2  
հր. 1972 թ.  
ԳՐԱԴԱՐԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ 2 հր. 1972 թ.



3299

1(088)

q-83